ԿՐՕՆԱԼԳԻՏԱԿԱՆ

ԺՈՐԱ ՍՐԿ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԷՖԹԱՆԱԶԻԱ.
ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Մահն այն երեւոյթն է, որը միշտ վախի զգացումով է ուղեկցել մարդուն: Հետաքրքրական է, որ էֆթանազիայի պարագային այն ոչ թե վախի զգացողություն է, այլ ցանկալի եւ բաղձալի իրողություն: Այդ իրողությունը բավական տարածված է եղել Հին աշխարհում, ուր տառապանքներից ազատվելու միակ միջոցը համարվել է մահը:

«Էֆթանազիա» եզրույթն առաջին անգամ առաջարկել է ԺԷ դարի անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնն իր «Նոր Օրգանոն» աշխատության էջերում[1]: Այս եզրույթի ժամանակակից ձեւակերպումը տրվեց 1980-ին՝ «Գթասրտությունից մղված սպանություն»[2]:

«Էֆթանազիա» բառն առաջացել է հունարեն **eu** - բարի եւ **tanatos** - մահ բառերից, որ բառացի նշանակում է բարի, լավ մահ: Դա այն գիտակցված գործողությունը կամ գործողությունից հրաժարումն է, որը հանգեցնում է անհույս, անբուժելի հիվանդ մարդու արագ մահվանը՝ չդադարող ցավերն ու տանջանքները դադարեցնելու նպատակով: Ավելի հստակ Էֆթանազիա ասելով հասկանում ենք անցավ եւ կարեկցանքից դրդված ոչնչացում նրա, որ տառապում է կամ համարում է, որ ինքը տառապում է, եւ ում տառապանքները ապագայում կարող են դառնալ անտանելի:

Էֆթանազիան բժշկի դիտարկմամբ կարող է լինել պասիվ եւ ակտիվ, իսկ հիվանդի դիտարկմամբ՝ կամավոր եւ ոչ կամավոր: Պասիվ էֆթանազիայի դեպքում բժիշկը դադարեցնում է այն գործողությունները, որոնց նպատակը հիվանդի կյանքը երկարացնելն էր, քանի որ դրանք անօգուտ, անիմաստ է համարում[3]: Այն սովորաբար բժշկին հնարավորություն է տալիս խուսափելու անձնական պատասխանատվությունից հիվանդի մահվան համար: Աշխարհում ավելի շատ ընդունված է պասիվ էֆթանազիան:

Ա. Նալչաջյանն իր «Մահվան հոգեբանություն» գրքում այսպես է սահմանում նաեւ ակտիվ էֆթանազիան. «Ակտիվ, դրական, գործուն էֆթանազիա կատարելիս բժիշկն իրագործում է անհուսալի հիվանդի մահն արագացնող նպատակաուղղված գործողություններ»[4]: Երկուսի միջեւ տարբերությունն էֆթանազիայի հակառակորդները մեկնաբանում են մի դեպքում՝ թույլ տալ մեռնել, մյուս դեպքում՝ որպես սպանություն:

Կամավոր էֆթանազիան իրականացվում է հիվանդի նախնական համաձայնությամբ:

---

1 Տե՛ս **Альберт Налчаджян**, Загадка смерти, Ереван, 2000, էջ 46:

2 http: // forum. hayastan. com/ index.php?

3 Տե՛ս **Ալբերտ Նալչաջյան**, Մահվան Հոգեբանություն, Երեւան, 1992, էջ 24 (հետայսու՝ Մահվան հոգեբանություն):

4 Անդ, էջ 24-25:

Նա իր կամքն արտահայտում է նախապես եւ իրավաբանական շարադրանքով, որը լայնորեն սկսել է տարածվել Արեւմուտքի մի շարք երկրներում: Կամավորությունն այդ դեպքում պահանջում է որոշակի նկարագրություն, որը կրացառի որեւէ երկիմաստություն: Կամքը պետք է արտահայտվի բազմիցս, հստակ եւ վճռական, ազատ՝ առանց արտաքին բարոյական, իրավաբանական, հոգեբանական կամ ուրիշ ճնշման՝ լավ տեղեկացվածության հիմքի վրա:

Ոչ կամավոր էֆթանազիան իրականացվում է առանց հիվանդի համաձայնության, ինչը չի նշանակում, թե այն հակասում է նրա կամքին: Խոսքն այն իրադրության մասին է, երբ հիվանդը նախապես չի արտահայտել իր կամքը կամ չի կարող արտահայտել (գտնվում է կոմայի մեջ), ընդ որում ենթադրվում է, որ եթե էֆթանազիայի խնդրի առաջացման պահին հիվանդը հնարավորություն ունենար արտահայտել իր կամքը, նա կգերադասեր մահանալ[5]: Այսպիսի իրավիճակներում ընտանիքն առաջին հերթինությունն է հիվանդի փոխարեն որոշում ընդունելիս, իսկ երբ ընտանիքի անդամների մեջ համաձայնություն չկա, դատարանի միջոցով կարող է ընտրվել այն անձը, ով հանդես կգա հիվանդին փոխարինող՝ որոշում կայացնող: Այդ անձը պետք է լավ ճանաչած լինի հիվանդին, իմանա նրա բարոյական արժանիքները, որպեսզի կարողանա այնպիսի որոշում ընդունել, որին կհամաձայներ հիվանդը եւ նույն որոշումը կընդուներ ֆիզիկապես կարող լինելու դեպքում:

Բացի կամավոր եւ ոչ կամավոր էֆթանազիայից, գոյություն ունի նաեւ չկանխամտածված էֆթանազիա, որը մեծ կիրառություն չունի: Չկանխամտածված էֆթանազիան խղճահարությունից դրդված սպանությունն է այն կարողունակ հիվանդների, որոնք ի վիճակի են արտահայտել իրենց կամքը, բայց էֆթանազիան կատարվում է հիվանդի կամքին հակառակ[6]:

Էֆթանազիայի խնդիրը ծագել է արեւմտյան մշակույթում, գլխավորապես՝ բողոքականության ազդեցության շրջանում: Կենսահույզ այս խնդիրն ունի իր երկար պատմությունը: Հայտնի է, որ անհույս հիվանդների կամ ծանր վիրավորների կյանքին վերջ դնելը բավականին տարածված երեւույթ է եղել Հին աշխարհում, մասնավորապես՝ Հին Հունաստանում: Այդ է վկայում Պլատոնի «Հանրապետություն» հռչակավոր աշխատությունը, ուր կանխորոշելով ցանկալի պետական կառուցվածքի հիմնական գծերը՝ հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ բժիշկները չպետք է խնամեն այն մարդուն, որն այլեւս ի վիճակի չէ ապրելու եւ պետք է թույլ տալ, որ նա մահանա: Պլատոնը կարծում է, որ այդ վերաբերմունքը նպաստավոր է եւ հիվանդի, եւ պետության համար:

Միջին դարերում բազմաթիվ զինվորներ ճակատամարտի ժամանակ մնում էին մարտի դաշտում՝ ծանր վիրավորված, մահամերձ ու անփոխադրելի վիճակում: Նրանք դատապարտված էին անխուսափելի մահվան՝ հոգեվարքի տանջալի ապրումներով: Այսպիսի իրավիճակներում մահը դիտվում էր որպես փրկություն, փրկություն երբեմն երկար եւ սաստիկ ցավից ու տանջանքից: Հետաքրքրականն այն է, որ այսպիսի իրավիճակների մեջ գտնվող զինվորների համար գործում էին հատուկ պատրաստված մարդիկ՝ խաչակերտ դաշույններով, որոնք իրականացնում էին մեռնողի վերջին «ցանկությունը»: Այդ դաշույնը

5 Տե՛ս **А. А. Гусейнова, Е. Л. Дубко**, Этика, Москва, 2006, էջ 467:
6 Տե՛ս **Joe Jenkins**, Ethics and Religion, էջ 92-93:

հայտնի էր «միզերկորդիա» անունով, որը թարգմանաբար նշանակում է «գթասրտություն»[7]:

Էֆթանազիայի առաջին զանգվածային կիրառմամբ աչքի է ընկել Ֆաշիստական Գերմանիան: Նացիստների կողմից մշակված էֆթանազիայի փորձը եղավ էֆթանազիայի քաղաքական առաջին ծրագիրը, որն ի կատար ածվեց: Դեռևս Ի դարի սկզբին գերմանացի հոգեբույժ Գոհեն և բժիշկ Բինդինգը փորձեցին հիմնավորել ազգի և մարդկության համար «ոչ լիարժեք» անձանց ոչնչացման անհրաժեշտությունը: Այդ մարդկանց ցուցակում առաջին հերթին հոգեկան և ծանր խրոնիկական հիվանդություններ ունեցողներն էին: Դրանից երեսուն տարի անց Ֆաշիստական պետությունն իրականացրեց այդ ծրագիրը: 1939 թ. սեպտեմբերին պաշտոնական էֆթանազիայի հայրը՝ Ադոլֆ Հիտլերը, ստորագրեց գաղտնի հրամանագիր, որի համաձայն «կյանքի բոլոր ձևերը, որոնք անարժան են կյանքին», հարկավոր է ենթարկել էֆթանազիայի[8]:

1939-1945 թթ. «Էֆթանազիայի ծրագրի» զոհերի թիվը Գերմանիայում կազմում էր 120.000-250.000 մարդ: Պատերազմից հետո որոշ էֆթանազիստ բժիշկներ ինքնասպան եղան, մյուսները դատվեցին Նյուրենբերգի դատարանի կողմից: 1946 թ. հոկտեմբերի 25-ից մինչև 1947թ. հուլիսի 19-ը Նյուրենբերգի ռազմական դատարանը քննեց քսաներեք բժիշկ էսէսականների գործերը և նրանց մեղադրեց պատժի առավելագույն չափով: Սեւ համազգեստով բժիշկների հանցավոր գործունեության շրջանակները լայն էին ու բազմազան՝ զազային խցիկների համար գերիների ընտրություն, համակենտրոնացված ճամբարներում եղած հիվանդների ոչնչացում՝ ֆենոլ կամ կապտաթթու ներարկելով, արտասահմանցի կին բանտարկյալների հղիության արհեստական ընդհատում, մարդկանց և հատկապես միաբջջային երկվորյակների վրա գիտափորձերի կիրառում, ռենտգենյան ճառագայթներով մարդկանց ստերջացման, բծավոր տիֆով և վիրուսային այլ հիվանդություններով վարակման փորձեր, մարդկային զանգերի և վերջույթների «հավաքածուի» ստեղծում և շատ ուրիշ վայրագություններ:

Խոսելով Ֆաշիստական Գերմանիայում իրականացված էֆթանազիայի մասին՝ կարեւոր է նշել, որ այն գաղափարախոսությունը, որն այժմ նպատակաուղղված է էֆթանազիայի արդարացմանը, չի նույնանում նացիստական գաղափարախոսության հետ: Էֆթանազիան ենթադրում է մահ հիվանդի օգտին, իսկ ֆաշիստները սպանում էին մարդկանց՝ առանց նրանց օգուտի մասին մտածելու[9]: Այնուամենայնիվ, գոյություն ունեն շփման եզրեր էֆթանազիայի ժամանակակից գաղափարախոսության և նացիստական տեսության միջև: Այդ ընդհանրությունը պայմանավորված է մարդու՝ որպես անհատի բացառիկության ճանաչելիության գաղափարի անտեսումով, իսկ երբ չկա այդ արժեքի գիտակցությունը, որը սերտորեն կապված է Աստծո գոյության համոզմունքի հետ, մարդկային փոխհարաբերությունները կարգավորվում են կամ պետական մակարդակով կամ էլ սկզբունքայնության դրսեւորումներով: Իսկ եթե մարդկային կյանքը ոմանց համար ոչ մի արժեք չի ներկայացնում, ապա այդպիսի մարդիկ միշտ կփորձեն այն օգտագործել հանուն իրենց քմահաճույքի բավարարման:

---

7 Տե՛ս **Ս. Ն Դավթյան**, Բիոէթիկա, Երեւան, 2009, էջ 111 (հետայսու՝ Բիոէթիկա):

8 Անդ:

9 Տե՛ս **Tony Hope**, Medical Ethics, Oxford, 2004, էջ 10:

Ներկայումս էֆթանազիայի խնդրի վերաբերյալ հասարակության մեջ առկա են երկու հակադիր մոտեցումներ՝ ազատական եւ պահպանողական: Էֆթանազիայի խնդրի վերաբերյալ այս երկու կողմերն այն մերժելիս կամ արդարացնելիս բախվում են խնդրի լուծման համար անհրաժեշտ այնպիսի կենսական հարցերի, ինչպիսիք են՝ մարդն ազատություն ունի՞ կամ բարոյական իրավունք ունի՞ վարվելու այնպես, ինչպես ինքն է ցանկանում, բարոյական կարո՞ղ է համարվել նրա այդ ցանկությունը, երբ այն չի վնասում ուրիշին կամ չի սահմանափակում այլ մարդկանց ազատությունը, նա իրավունք ունի՞ ընտրելու իր մահվան ձեւն ու ժամանակը եւ պե՞տք է արդյոք, որ աջակցություն ստանա այդ գործողության մեջ, մարդն իրավունք ունի՞ իր նմանին եւ Աստծո պատկերն ու նմանությունը կրողին կյանքից զրկել կամ այդ դեպքում ինչպիսի՞ն է բարոյական պատասխանատվություն կրելու խնդիրը, բժիշկը պե՞տք է աջակցի հիվանդին մահանալու նույնիսկ այն դեպքում, երբ առկա են վերջինիս համաձայնությունը եւ խնդրանքը, ի՞նչ ազդեցություն կունենա այս աջակցությունը մյուս հիվանդների, հոգեկան ծանր վիճակում գտնվող մարդկանց[10] եւ առհասարակ հասարակության վրա, որքանո՞վ կամ ո՞ր դեպքերում է ընդունելի տառապալի կյանքն արհեստական միջոցներով երկարաձգելը եւ այլն: Էֆթանազիան շարունակում է առաջ քաշել անձնական եւ հասարակական արժեքների, անհատի իրավունքի եւ դրա սահմանների, բժշկության նպատակի եւ մեռնել ցանկացող հիվանդի նկատմամբ պարտականությունների վերաբերյալ հարցեր:

Էֆթանազիան իր մի կողմով ինքնասպանություն է, քանզի առկա է հիվանդի համաձայնությունը՝ մահվան ելքով ավարտելու իր տառապալից կյանքը, ինչպես նաեւ նա կարող է ինքն անջատել կենսապահպան սարքը: Հետեւաբար էֆթանազիայի բարոյական-քրիստոնեական մոտեցման տեսանկյունից այն քննարկենք ինքնասպանության խնդրի ներքո:

Ս. Գրքում առկա են ինքնասպանության մի քանի դեպքեր: Փորձենք ավելի մանրամասն անդրադառնալ Աստվածաշնչում ինքնասպանության ամենահայտնի փաստին՝ Հուդայի ինքնասպանությանը: Հուդայի ինքնասպանության խնդիրը միշտ էլ եղել է աստվածաբանների ուշադրության կենտրոնում: Նրանք փորձել են բացատրել եւ հիմնավորել, իսկ վերջին շրջանում նույնիսկ արդարացնել Հուդայի արարքը: Բայց դրանք ընդամենը կարծիքներ են, քանզի դժվար է թափանցել Հուդայի ներքին աշխարհը, զգալ եւ ներկայացնել նրա ապրումները: Այդ մանրամասնություններին չանդրադառնալով՝ հայացք ուղղենք Հուդայի ինքնասպանության մեղքին, որն ընդհանրություններ ունի մեր թեմայի հետ:

Հուդայի արարքը եւ առհասարակ ինքնասպանությունը մեծ մեղք է համարվում Աստվածաշնչում: Հիշենք, որ Ծննդոց Թ 6 համարն ուղղակի հրահանգում է. «Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի՛ արիւն նորա: Զի ի պատկե՛ր Աստուծոյ արարի ես զմարդն»: Այնուհետեւ տասնաբանյայի վեցերորդ պատվիրանն ասում է. «Մի՛ սպանաներ» (Ելք Ի 13, Բ Օրէնք Ե 17): Պատվիրանը բովանդակում է նաեւ ինքնասպանության մեղքը: Էֆթանազիայի հակառակորդներն իրենց փաստարկների մեջ ներկայացնում են

10 Հոլանդիայում դատարանը վճիռ է կայացրել որոշ հիվանդ երեխաների կյանքի նկատմամբ կիրառված ծանր հոգեկան վիճակում գտնվող անձանց ցանկությամբ կատարված էֆթանազիայի համար պատիժ չսահմանել: Այս երկիրն առաջնորդվում է այն սկզբմունքով, որ հոգեբանական տառապանքը մտնում է անհրաժեշտ չափանիշների մեջ, որոնք օրինական են դարձնում բժշկի օգնությունը:

նախ բարոյական-կրոնական հենց այս հրահանգը: Աջակցված մահվան եւ էֆթանազիայի արժեքը մարդկային կյանքի արժեքի գաղափարն է արտացոլում, որը խոր արմատներ ունի քրիստոնեական ավանդության մեջ: Այդ ավանդությունը կյանքն Աստծուց տրված պարգեւ կամ փոխառություն է համարում: Աստված է ստեղծել ամեն ինչ, ներառյալ մարդկային կյանքը եւ բարի է հռչակել այն (հմմտ. Ծնն. Ա 31): Մարդկային կյանքի վերաբերյալ այս տեսակետն առաջին հերթին նշանակում է, որ մենք պետք է փայփայենք այն եւ անենք ամեն ինչ հանուն նրա պաշտպանության: Մեր կյանքը մեր սեփականությունը չէ. Աստված է մեր կյանքի սեփականատերը: Այս դեպքում մեր կամ ուրիշի կյանքի հետ վարվելու իրավունքները սահմանափակ են:

Գուցե վիճելի եւ անհավանական թվա, բայց հնարավոր է այնպիսի մի ենթադրություն, ըստ որի՝ Ադամի մեղքը ոչ այնքան արգելված ծառից ուտելն էր, որքան այն, ինչ նա արեց հետագայում: Աստծո կատարած «հարցաքննությունն» իրողությունը պարզելու նպատակ չէր հետապնդում: «Ի՞նչ արեցիր» հարցն Աստծո շուրթերում անիմաստ է, եթե դա ասվում է պարզելու համար տեղի ունեցածը: Մարդկանց մտքերը կարդացող Աստված անշուշտ գիտեր կատարվածը: Հարցի էությունն այն է, որ դրանով միգուցե Աստված մեղքերը քավելու հնարավորություն տվեց Ադամին. եթե նա ոչ միայն խոստովաներ իր մեղքը, այլեւ իր վրա վերցներ ողջ պատասխանատվությունը, ապա դա սիրով թելադրված ինքնազոհաբերում կլիներ: Այդ դեպքում Ադամը, իմանալով, որ իրեն մահ է սպասվում, կվերականգներ մարդու մեջ Աստծո պատկերը եւ չէր դատապարտվի տաժանքի եւ մահվան. չէ՞ որ Եւային փրկելը կնշանակեր կյանք փրկել («Եւա» նշանակում է «կյանք»): Բայց Ադամն իր անձը հարվածի տակ չդնելու համար ասաց. «... Կինս զոր ետուր ընդ իս՝ եր ինձ ի ծառոյ անտի եւ կերայ» (Ծնն. Գ 12):

Ահա այստեղ էլ հանդիպում ենք Ս. Գրքում մատնության առաջին դեպքին: Թեեւ այդպես էր եղել, ինչպես որ ասաց Ադամը, բայց միեւնույն է՝ նրա արածը մատնություն էր: Տերը հարցնում էր Ադամին իր արածի մասին, մղում նրան զղջման, ոչ թե մատնության: Հուդան էլ սուտ չէր ասել Կայիափայի գործակալներին, բայց նրա «ճշմարտությունը» մատնություն էր: Այստեղ ընդհանրություն կարելի է տեսնել Աստծո՝ Ադամին ուղղված հարցի եւ Քրիստոսի՝ Գեթսեմանիի պարտեզում ձերբակալության պահին Հուդային ուղղված հարցի միջեւ՝ «Յու՛դա՝ համբուրելո՞վ մատնես զՈրդի Աստուծոյ» (Ղուկ. ԻԲ 48): Ընդհանրությունը տրված հարցերի էության մեջ է՝ կշտամբանք եւ հնարավորություն՝ ուղղելու գործած սխալները: Սա նշանակում է, որ նրանց մատնության մեղքը ներելի էր: Ուրեմն, մասնավորապես անդրադառնալով Հուդային՝ ասենք, որ նրա աններելի մեղքը ոչ թե մատնությունն էր, այլ այն, ինչ հետո նա արեց, որն էլ համարվեց աստվածհայհոյություն:

Աստվածհայհոյության աններելիության մասին Քրիստոս ասաց. «Վասն այդորիկ ասե՛մ ձեզ. Ամենայն մեղք եւ հայհոյութիւնք թողցի՛ն մարդկան, բայց զՀոգւոյն հայհոյութիւն մի՛ թողցի: Եւ որ ոք ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՀոգւոյն Սրբոյ ասիցէ՝ մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի, եւ մի՛ ի հանդերձելումն» (Մատթ. ԺԲ 31-32):

Նշված մտքի այսպիսի ձեւակերպումը Մատթեոսի Ավետարանում նշանակում է, որ ներվում է ըմբոստացումը միայն մարդու նկատմամբ, անգամ եթե նա մարդեղացած Աստված է, բայց մեղանչողը դեռ չի ճանաչել նրան որպես Տեր եւ Փրկիչ: Բայց այդ դեպքում

ինչո՞ւ է Հիսուս շեշտում Սուրբ Հոգուն ուղղված հայհոյության անները ելիությունը եւ ոչ թե պարզապես Աստծո (Հայր, Որդի): Այստեղ կա հետաքրքրքրական եւ կարեւոր մեկնաբանություն, որը բացահայտում է ինքնասպանության անները ելիության ամբողջ էությունը. Ավետարանի Սուրբ Հոգին Հին Կտակարանի Աստծո Հոգին է, որ արարչությունից առաջ շրջում էր ջրերի վրա (հմմտ. Ծնող. Ա 2): Հենց նա դարձավ մարդու կյանքի աղբյուրը. Աստված մարդ ստեղծելիս «փչեաց յերեսս նորա շո՛նչ կենդանի, եւ եղեւ մարդն յոգի կենդանի» (Ծնող. Բ 7): Մարդու հոգին աստվածային է, հետեւաբար մարդն իշխանություն չունի նրա վրա, քանզի Աստված այդ իշխանությունը չի տվել: Ուրեմն անները ելի մեղք է հայհոյությունն ուղղված Ս. Երրորդության այն Անձի դեմ, որ կենդանություն պարգեւեց մարդուն արարչության ժամանակ, իսկ դա Սուրբ Հոգին է: Սուրբ Հոգուն ուղղված հայհոյությունն Ավետարաններում համարվում է մահվան ընտրություն: Եթե հայհոյությունն Աստծո՝ Ս. Հոգու դեմ նույնն է, ինչ մահվան ինքնակամ ընտրությունը, ապա անշուշտ իրական է նաեւ հակառակ կապվածությունը. ինքնասպանությունը, մահվան ինքնակամ ընտրություն լինելով, դառնում է հայհոյություն կյանք պարգեւողի՝ Ս. Հոգու դեմ: Սրանով է բացատրվում, թե ինչու, ըստ Ավետարանի, ներելի են բոլոր մեղքերը, բացի ինքնասպանության մեղքից: Այն ամենասարսափելի մեղքն է Աստծո դեմ, Ս. Հոգու դեմ ուղղված հայհոյանք՝ ծանր, անչափելի ու անները ելի: Ահա այստեղ է, որ կփորձենք մի շատ կարեւոր հարցադրում անել՝ թերեւս առանց պատասխանի. էֆթանազիան մի՞թե անները ելի մեղք չէ, ի՞նչ կործանարար մեղքով է տարբերվում Հուդայից այն հիվանդը, որ դիմում է էֆթանազիայի:

Քրիստոնեական պատկերացմամբ կյանքի իմաստն այս աշխարհի հետ կապված չէ: Բարոյագիտության իդեալիստական ուղղություններից մեկը՝ հեդոնիզմը, դավանում է, որ հաճույքը կյանքի ամենամեծ բարիքն է, գերագույն նպատակը[11]: Այդպիսի մտածելակերպը սահմանափակվում է միայն այս աշխարհի գոյության համոզմամբ, իսկ հանդերձյալ կյանքի գոյության հնարավորության մասին խոսք լինել չի կարող: Բայց անբուժելի հիվանդը պետք է պատրաստվի ոչ թե մահվան, այլ հավիտենական կյանքի: Հենց այս հավիտենական կյանքի նկատմամբ հավատի բացակայությունն է նաեւ, որ հուսահատություն է առաջացնում: Կյանքի իմաստի գիտակցումը կապված է կյանքի նպատակի հետ. եթե գոյություն չունի հավիտենական կյանք, ապա կյանքի գերագույն նպատակը հաճույքն է:

Հոգու անմահությունը հաստատում է հավիտենական կյանքի գոյությունը: Այս մոտեցմամբ մարդու կյանքն այս ժամանակավոր աշխարհով չի սահմանափակվում, եւ նրա կյանքի նպատակը դառնում է հոգու փրկությունը, այն հավիտանական կյանքին արժանի դարձնելը: Ուրեմն ինքնասպանությունը դառնում է անգիտակից արարք, որը ժխտում է հավիտենական կյանքի իրականությունը: Ն. Բերդյաեւն ասում է, որ այն, լինելով աստվածային եւ մարդկային օրենքների խախտում, առաջացնում է սարսափելի, համարյա գերբնական զգացողություն՝ բռնություն ոչ միայն կյանքի, այլեւ մահվան վրա:

Յուրաքանչյուր մարդու կյանք երկրի վրա ընթանում է Աստծո նախախնամությամբ. արարածն իրավունք չունի միջամտելու Արարչի գործերին եւ դադարեցնելու մի կյանք, որի գործարկումը միայն Ամենաբարձրյալին է վերապահված: Չնայած բոլոր մարդիկ բնական ծնունդով ծնողներից են առաջանում, սակայն, այնուամենայնիվ, Աստված է յուրաքանչյուր

11 Տե՛ս **Э. Фромм**, Бегство от свободы, Минск, 2000, էջ 389 (հետայսու՝ Бегство от свободы):

մարդու Արարիչը: Մահկանացուն չի կարող ծնել անմահ հոգի. այն ասպվածային է: Տերն օրհնության զորությամբ արարման պահին ասաց. «...Աճեցէ՛ք եւ բազմացարո՛ք եւ լցէ՛ք զերկիր...» (Ծնող. Ա 28): Այս խոսքն ուժի մեջ է մինչեւ հավիտյանների կատարումը: Հետեւաբար մարդն ամեն գնով պետք է փայփայի Աստծո՝ մարդուն տված գերագույն պարգեւը՝ կյանքը՝ անսալով աստվածաշնչյան պատգամին. «Մի՛ ցանկանայք մահու մոլորութեամբ կենաց ձերոց. եւ մի՛ ձգէք յանձինս գսատակումն գործովք ձեռաց ձերոց» (Իմաստ. Սողոմոնի Ա 12):

«Հարկավոր է ամբողջ ուժով ձգտել ապրել, նույնիսկ եթե այն շատ քիչ բան է հիշեցնում իրական կյանքի մասին», - ասում է Անտոն Սուրոժսկին[12]: Աստված կարեւորում է յուրաքանչյուր առանձին մարդու՝ նրա մեջ տեսնելով այն անծայրածիր արժեքը, որ Տիրոջ համար քննարկման ենթակա չէ: Այնպես է ծրագրվել, որ մեկ մարդու կյանքը հավասարազոր է ողջ աշխարհի գոյությանը, այն աշխարհի, որն ստեղծվել է ընդամենը որպես մարդու բնակավայր:

Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիների աստվածաբանության մեջ ասվում է, որ եթե հոգին առաջանար սաղմից, որից եւ առաջանում է մարմինը, ապա նրանք միասին էլ կմեռնեին[13]: Բայց հոգին անմահ է, որի վրա մահկանացու մարդն իշխանություն չունի: Տիրոջն է կյանքի եւ մահվան իշխանությունը (հմմտ. Իմաստ. Սողոմոնի ԺԶ 13): Եթե մարդն իր կյանքի տերը լիներ, ապա մի՞թե չպիտի կարողանար տնօրինել այն այնպես, որ հասներ գերագույն երջանկության: Բայց մարդու՝ այս աշխարհի վրա ընթացքն այդ երջանկության անվերջ ու անբավարար ձգտում է: Գերագույն երջանկությունը կարող է իրականանալ միայն հավիտենական կյանքում, քանզի դրա աղբյուրը միայն Աստված է: «Երբ մարդը կը սնուցանէ երջանկութեան եւ կատարելութեան բաղձանքներ՝ կը նշանակէ որ սահմանուած է երջանկութեան ու կատարելութեան, եւ քանի որ անոնց չի կրնար տիրանալ երկրի վրայ, ինքնին կը հետեւի որ պիտի տիրանայ անոնց անդենականի մէջ. այսինքն Աստուծոյ արքայութեան մէջ», - ասում է Շնորհք եպիսկոպոս Գալուստյանը[14]:

Եւ վերջապես եթե մարդն իշխանություն ունենար իր կյանքի նկատմամբ, ապա ինչո՞ւ նրան հայտնի չէ իր մահվան օրը: Պատասխանը միանշանակ է՝ որովհետեւ նա չէ հոգու արարիչը. «Մահ մարդոյ հանգի՛ստ է յորմէ ճանապարհն թաքեաւ ի նմանէ. զի փակեաց զնովաւ Աստուած» (Յոբ Գ 22-23):

Էֆթանազիայի հարցը քննարկելիս առաջ են գալիս նաեւ մարդու ազատ կամքին առնչվող կենսական հարցեր, որոնք լուծում են պահանջում հատկապես բարոյա-կրոնական դաշտում: Ոմանց կարծիքով էֆթանազիան մարդկանց ազատություն է տալիս: Ջոն Ստյուարտ Միլլն իր «Ազատության մասին» գրքում պնդում է, որ ուրիշներին չառնչվող հարցերում անհատը պետք է լիակատար անկախություն ունենա: Նա իշխանություն ունի իր մարմնի վրա կյանքին վերաբերող հարցերում, եւ նույն ազատությունը պետք է ունենա մահվանն առնչվող խնդիրներում: Կամքի ազատությունը բացարձակացվում է նաեւ սցիենտիկ մտածելակերպի համաձայն, որի կողմնակիցները ժխտում են Աստծո գոյության հնարավորությունը՝ ամբողջ տիեզերքի գոյությունը բացատրելով պատահականությամբ: Սա

12 Տես **А. Метрополит Сурожский**, Жизнь, болезнь, смерть, Клин, 2001, էջ 56-57:

13 Տես **Кант**, Метафизические начала естествознания', М., 1992, էջ 1289:

14 **Շնորհք եպիսկոպոս Գալուստյան**, Տեղիք Աստուածաբանության, Երուսաղեմ, 1993, էջ 76:

նրանց հիմք է տալիս մարդուն իր դատավորը համարելու իրեն առնչվող բոլոր հարցերում, ներառյալ՝ կյանքի եւ մահվան:

Ահա վերը նշված մոտեցումներն են, որ կրոնա-բարոյական տեսանկյունից առաջին հերթին վեր են հանում մարդու բարոյական պատասխանատվության խնդիրը ոչ թե արդեն մարդկանց, այլ Աստծո նկատմամբ: Մարդու ազատությունը սերտորեն առնչվում է բարոյական պատասխանատվության հետ նրա հանդեպ, ով պարգեւել է այդ ազատությունը:

Ազատությունը մարդու բարոյականության դրսեւորման եւ բարոյական արժեքների ու գործողությունների արտահայտման միջոց է: Աստված մարդուն ստեղծել է իր պատկերով եւ նմանությամբ: Աստծո պատկերով ստեղծված լինելն առաջին հերթին կամքի ազատությունն է: Առաջին իսկ օրենքում Աստված արգելք է դնում Ադամի վրա. «...բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ եւ չարի՝ մի՛ ուտիցէք...» (Ծնն. Բ 17): Բարու եւ չարի գիտության ծառից ճաշակելու արգելքը նշանակում էր չարի հետ միանալու արգելք (հիշենք, որ չարն արդեն աշխարհ էր մուտք գործել մինչ մարդու արարումը՝ հոգեղեն էակների միջոցով): Արարիչն իհարկե կարող էր ստեղծել այնպիսի մի էակ, որը ծրագրված լիներ բացարձակապես ու անշեղորեն բարին գործելու եւ մեղքից հեռու մնալու, սակայն դրանով արարչությունն անանպատակ կլիներ: Նման էակն արժեք չէր ունենա այն իմաստով, որ Աստծո համար արժեքավոր է ոչ թե պարտադրված, այլ ազատ կամքով ընտրված բարին: Այդ պատճառով էլ ընտրության ազատությունը մարդու մեջ Աստծո պատկերի ու նմանության կարեւորագույն բաղադրիչն է:

Դրախտի արգելքը նպատակ չուներ սահմանափակելու մարդու ազատ կամքը, այլ միջոց եւ հնարավորություն էր՝ դրա ճիշտ օգտագործմամբ հասնելու կատարյալ վիճակի. չէ՞ որ մարդը կատարյալ չէր ստեղծվել, այլ՝ իր ազատ ընտրությամբ կատարյալին հասնելու կարողությամբ: Աստված սահմանափակեց մարդու բացարձակ ազատությունը՝ դրա փոխարեն նրան պարգեւելով իմաստավորված ազատություն: Բացարձակ ազատությունը մարդու պարագային կնմանվեր այն նույն անանպատակ ազատությանը, ինչպիսին էր նախասկիզբ քաոսը, մինչդեռ արարչությունը կարգուկանոնի, օրենքի ներմուծում էր քաոսի մեջ: Աստծուց հեռանալը կործանիչ մի ձգտում է՝ վերադառնալու նախասկիզբ քաոսի ազատության անիմաստության մեջ: Այնպես որ մարդու ազատագրումն Աստծուց մեղսագործության ազատության նվաճում է: Նույն իմաստավորումն ունի ռուս հանճարեղ գրողներից մեկի՝ Դոստոեւսկու նշանավոր միտքը, որ եթե Աստված չկա, ամեն ինչ թույլատրելի է: Նման պատճառա-հետեւանքային կապն իհարկե երկկողմ է՝ ենթադրելով նաեւ հակառակ պայմանավորվածություն. եթե Աստված կա, ապա թույլատրելիության սահմաններն ավելի նեղ են, եւ որքան մեծ է մեղքը, այնքան ավելի շատ են սահմանափակումները:

Մարդու երկրային կյանքն ունի երկու սահման՝ սկիզբ եւ վերջ: Բեղմնավորումը եւ մահն Աստծո ներկայության երկու ձեւերն են. առաջինը նվիրում է երկրային կյանք, երկրորդը՝ բացում այն հավիտենականության համար: Մարդ չի կարող խուսափել ինչպես առաջին հանդիպումից, այնպես էլ երկրորդից: Մարդկային կյանքի երկու սահմանները՝ կյանքն ու մահը, բովանդակում են արարչագործության առեղծվածը եւ Քրիստոսի խաչի խորհուրդը: Այս երկուսի միջեւ փարածքը պատկանում է մարդու ազատությանը, բանականությանը, կամքին եւ կյանքին: Այդ ազատությունը չի խաթարում նույնիսկ Աստված: Բայց այդ սահ-

մաններից այն կողմ գործում է Աստծո ազատությունը, եւ մարդը կոչված է հարգելու այն[15]:

Աստված, լինելով տիեզերքի արարիչը, նախախնամում է այն: Սա նշանակում է, որ տիեզերքը չի թողնված իր բախտին, այլ խնամվում, պահպանվում ու առաջնորդվում է Աստծո կողմից դեպի իր վերջնական նպատակը: Հին կտակարանում հաճախ շեշտվում է Աստծո ներգործությունն իր ստեղծագործության վրա, սակայն այդ ներգործությունը, որպես աստվածային նախատեսում կամ նախասահմանություն, առաջին անգամ հանդիպում ենք հունարենով գրված մի գրքում (Իմաստություն ԺԴ 3, ԺԷ 2), ուր «նախատեսում» բառի փոխարեն դրված է ստոիկների գործածած «պրոնոյա» բառը: Նոր կտակարանում բազմաթիվ ակնարկություններ կան նախախնամության մասին (Մատթ. Ջ 25-34, Ժ 28-31, Ղուկ. ԺԲ 6-7, ԻԲ 31, Յովհ. Ե 17):

Աստվածային այս նախախնամությունը չի կաշկանդում մարդու ազատությունը, այլ գործում է տիեզերքում որպես նրա մեջ հաստատված բնական օրենք: Եթե մարդու ազատությունը կախում ունենար նախախնամությունից, ապա մարդը հլու հնազանդ կլիներ եւ մեղք գործելու հնարավորություն չէր ունենա: Իսկապես, եթե մարդն ազատություն չունի, ուրեմն նա բարոյապես պատասխանատու չէ իր արարքների համար, բայց քանի որ Աստված պատասխանատվության է ենթարկելու կամքը, նշանակում է՝ մարդուն տվել է ազատ կամք:

Սուրբ Գիրքը մարդուն հայտնում է այն, ինչը նախասահմանված է: Նախասահմանությունը կապված է Աստծո ամենատեսության հետ, Ում հայտնի է մարդու ազատ կամքի հետագա ընտրությունն ու հետեւանքը: Այս մասին է վկայում Պողոս առաքյալի Հռոմեացիներին ուղղված թուղթը. «... որովհետեւ նրանց, որ առաջուց գիտեր, նախասահմանեց կերպարանակից լինելու իր Որդու պատկերին...» (Հռոմ. Ը 29):

Աստված գիտե՛ւ անցյալը, և՛ ներկան, և՛ ապագան, սակայն Աստծո ամենագետ լինելը չի սահմանափակում մարդու ազատ կամքը: Դատարկված դեպքերը կապված չեն Աստծո՝ նախապես իմանալու հետ, այլ մարդու ազատ ընտրության արդյունք են: Մարդու ազատ ընտրությունը նրա բարոյական արժեքն է: Աստված նախասահմանում է այն բաները միայն, որոնք կախում չունեն մարդու կամքից: Եթե մարդն օժտված չլիներ ազատ կամքով, աստվածային շնորհը փրկարար նշանակություն չէր ունենա, իսկ մարդու փրկությունը սկսում է նախեւառաջ շնորհի ազատ ընդունմամբ: Նրա ազատ կամքն աստվածային շնորհի՝ մարդու մեջ պտուղ տալու վճռող ազդակն է:

Ուղղափառ մտածողության մեջ մարդու ազատությունը նախեւառաջ նկատվում է իբրեւ մեղքից ազատագրվածություն: Քրիստոնեությունն ազատության արժեքը տեսնում է Աստծուն հավատալու մեջ, մարդկային ազատ կամքը աստվածային կամքին ենթարկելու մեջ: Ճշմարտության ճանապարհով քայլելու այս օրինակը Հիսուս եղավ, որ Գեթսեմանիում քրտինքն արյան փոխած՝ իր աղոթքն ավարտեց հետեւյալ խոսքերով. «...բայց ո՛չ իմ կամք՝ այլ քո՛յդ լիցին» (Ղուկ. ԻԲ 42): Այս հնազանդությունն իրականացավ խաչի վրա:

Հիրավի մարդն ազատ է: Այդ ազատության բարձրագույն արժեքը ոչ թե բարու եւ չարի միջեւ ընտրություն կատարելու բուն կարողությունն է, այլ բարու ընտրությունը, երբ մարդը թույլ է տալիս, որ Աստվածային բարիքը մուտք գործի իր անձնական մարդկային ազատության տիրույթը, երբ իր կյանքում տեղ է տալիս Աստծուն: Այդ դրույթը հիմնված է

15 Տես **Б. Г. Юдин, П. Д. Тищенко**, Биоэтика, Москва, 2005, էջ 404:

ազատության ըմբռնման առաքելական ավանդությունների վրա: Ազատության էությունն արտահայտված է հատկապես Գաղատացիներին ուղղված առաքյալի թղթում. «Զի դուք յազատութիւն կոչեցեալ էք: Ե՛ղբարք, միայն զի ազատութիւնն ձեր ո՛չ լինիցի ի պատճառս մարմնոյ...» (Գաղ. Ե 13)[16]:

Այսպիսով, ազատությունը, որպես գերագույն պարգև, շնորհվել է մարդուն որպես միջոց եւ հնարավորություն կատարելանալու: Բայց մարդն Աստծո պարգեւած ազատությունը ծառայեցնում է իր նպատակին եւ շահին ու երբեմն իրեն Աստված համարելով՝ վճռում է այնպիսի հարցեր, որոնք միայն Նա է տնօրինում: Սեփական կյանքի եւ մահվան ընտրությունը այդ խնդիրներից թերեւս կարեւորագույնն է:

Էֆթանազիայի կողմնակիցների փաստարկներում առանձնահատուկ կերպով շեշտվում է տառապանքների հիմնավոր պատճառ լինելը մահվան դիմելու համար: Նրանք այն կարծիքին են, որ ահագնացող եւ շարունակական տառապանքների դեպքում միակ ելքը մահն է: Կյանքի իմաստը գնահատվում է հաճույքների եւ տառապանքների համեմատական առավելությամբ. եթե տառապանքները գերազանցում են հաճույքներին, այդ դեպքում կյանքի իմաստը որոշում է տվյալ անհատը:

Աստվածաբանության էական խնդիրներից մեկը տիեզերքում տառապանքների գոյության իմաստի ընկալումն է: Տառապանքը մահվան եւ Քրիստոսի հարության լույսի ներքո մարդկային գոյության անհրաժեշտ մասն է: Քրիստոսի հարության լույսի ներքո այն մարդուն նոր մոտեցման առիթ է տալիս դեպի Աստված եւ դեպի մարդ: Մարդ արարածը՝ որպես տառապանքի եւ մահվան ենթակա էակ, դրա միջոցով կարողանում է բացահայտել իր եւ իր նմանի կյանքի իմաստը: Բնականաբար սա չի նշանակում, որ նա հնարավորության դեպքում չպետք է խուսափի ցավից ու տառապանքից, բայց այդ խուսափումը չպետք է լինի այնպիսի միջոցներով, ինչպիսին էֆթանազիան է[17]:

Քրիստոնեությունը սովորեցնում է, որ այս կյանքի տառապանքներն անիմաստ չեն: Դրանք մարդուն դարձնում են ավելի մարդկային, օգնում նրան վերականգնելու իսկական կապն Աստծո հետ[18]: Տառապանքը մարդու համար բարոյական արժեքների եւ հոգեւոր ուժի աղբյուր է՝ առաջնորդելով նրան հավատի, սիրո եւ հոգեւոր աճի[19]:

Տառապանքի իմաստի քրիստոնեական ընկալումը հասկանալու համար նախ պետք է հասկանալ, թե ինչո՞ւ են առհասարակ դրանք մարդուն ուղեկցում ողջ կյանքի ընթացքում: Մարդաբանական իմացության մասին հիվանդների հոգեկան պատկերացումներից դուրս գոյություն ունի նաեւ աստվածաբանական մի հին պատկերացում, որի համաձայն մարմնի հիվանդ վիճակը պարունակում է նաեւ կրոնական իմաստ: Մարդու հեռացումն Աստծուց՝ կյանքի աղբյուրից, մարմնի հիվանդ վիճակի գլխավոր պատճառն է: Այս տեսակետն արդեն իսկ տեսանելի է Աստվածաշնչում, քանզի ցավն ու տառապանքը մեղսագործությունից անմիջապես հետո աշխարհ մտան՝ «Բազմացուցանելո՛վ բազմացուցից զտրտմութիւնս քո

16 Հմմտ. **Կիրիլ Պատրիարք**, Ազատություն եւ Պատասխանատվություն, Ս. Էջմիածին, 2010, էջ 91-92:

17 Տե՛ս **Byrne Peter, Leslie Houlden,** Companion Encyclopedia of Theology, London and New York,1995, էջ 823 (հետայսու՝ Companion Encyclopedia of Theology):

18 Տե՛ս **Ջովանիի Գուայտա**, Ջրույցներ Ջովանիի Գուայտայի հետ, Ս. Էջմիածին, 2001, էջ 259:

19 Հմմտ. **Paul Badham, Paul Ballard**, Facing Death, University of Wales Press Cardiff, 1996, էջ 112 (**Paul Badham**, A Theological Examination of the Case for Euthanasia):

եւ զհեծութիւնս քո. տրտմութեամբ ծնցես որդիս. եւ առ այր քո դարձ քո, եւ նա՛ տիրեսցէ քեզ» (Ծնն. Գ 16):

Այնուհետեւ Աստված Ադամին ասաց. «...անիծեալ լիցի երկիր ի գործս քո. տրտմութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց ...» (Ծնն. Գ 17):

Մարդու անկման հետեւանքները թե՛ ֆիզիկական, թե՛ բարոյական էին: Ֆիզիկական մակարդակում մարդը ենթակա դարձավ ցավին ու ախտին, ծերության տկարությանն ու մարմնական անկայունությանը: Կնոջ նոր կյանք տալու բերկրանքը միախառնվեց որդեծնության ցավերին (հմմտ. Ծնն. Գ 16): Անկման հետեւանքով մարդը ենթակա դարձավ նաեւ ֆիզիկական մահվան ժամանակ հոգու եւ մարմնի բաժանմանը:

Բարոյական մակարդակում անկման հետեւանքով մարդը մատնվեց հուսալքության, ձանձրույթի եւ վհատության: Նա ենթարկվեց ներքին օտարացման. դուրս գալով ինքն իր դեմ՝ նա դարձավ իր իսկ ախոյանն ու դահիճը:

Մեղքի հետեւանքները ծանր են լինում մարդու համար: Նա կորցնում է նախնական պարգեւները, եւ ցավն ու տառապանքը մարդուց անբաժան են դառնում:

Նոր Կտակարանում եւս հանդիպում ենք այն փաստին, որ հիվանդությունները եւ տառապանքները հիմնականում մեղքի հետեւանք են: Հիվանդության մասին Եկեղեցու աստվածաբանական մոտեցումն ու մեկնաբանությունը մեծապես պայմանավորված են Հիսուս Քրիստոսի երկրային գործունեությամբ ու առաքելությամբ: Հիսուսի գործունեության առանցքը հիվանդության բժշկումն էր լայն իմաստով, այսինքն՝ անկում ապրած մարդկության վերականգնումն իր նախնական եւ սկզբնական վիճակին: Սա իր հիմնական ուղղվածությամբ մեծ ընդգրկում ունի՝ մեղքից ազատագրում եւ հաղթանակ մահվան նկատմամբ՝ արդյունավորելով ամբողջ տիեզերական ներդաշնակությունը:

Նորկտակարանյան պատմությունները մեզ բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում Հիսուսի գործած հրաշք-բժշկությունների մասին՝ կաղի, կույրի, անդամալույծների, բորոտների բժշկությունները, դեւերի հալածումը[20]: Նոր կտակարանում եւ Գործքում նշվում է Հիսուսի եւ առաքյալների գործած բժշկության քսանինը դեպք: Բժշկությունը կատարվում էր հիվանդի կամ մերձավորների հավատքի առկայության դեպքում: Ուշադրություն դարձնենք Ավետարանում առկա այն իրողությանը, որ հիշատակված որոշ դեպքերում բժշկելուց առաջ Հիսուս նախ մեղքերի թողություն էր տալիս, որից հետո կատարվում էր բժշկությունը: Այս հանգամանքը շատ պարզ արտահայտված է անդամալույծի բժշկման դրվագում՝ «...Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեա՛լ լիցին քեզ մեղք քո» (Մատթ. Թ 2):

Այնուհետեւ Հիսուս ասաց անդամալույծին. «Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողո՛ւլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. Արի ա՛ռ զմահիճս քո՝ եւ ե՛րթ ի տո՛ւն քո: Եւ յարուցեալ գնաց ի տուն իւր» (Մատթ. Թ 6-7):

Այս հատվածում հստակ է, որ անդամալույծի մեղքերի ներումը բժշկեց նրա հիվանդությունը: Սա մի վկայություն է, որ հիվանդությունների առաջացման գլխավոր պատճառներից մեկը մարդու սեփական մեղքն է: Ուրեմն Ավետարանում եւս վկայություններ ենք տեսնում, որ հիվանդությունն ու տառապանքը հիմնականում մեղքի հետեւանք են լինում:

20 Մատթ. Ը 14-17, Թ 1-8, Թ 18-26, Մարկ. Ա 40-45, Է 33, Ը 23-26, Ղուկ. Ը 46:

Այսպիսով, քրիստոնեությունը մարդուն բաժին հասնող հիվանդությունների մեծ մասը պայմանավորում է նրա անբնական եւ անբանական կյանքով, որի ընթացքում նա իր մեղքերի պատճառով խախտում է աստվածային պատվիրաններով եւ բնական օրինաչափություններով սահմանված վարքաձեւերը: Սրա լավագույն վկայություններից մեկը տեսնում ենք Սիրաքի իմաստության մեջ. «Ով մեղանչում է իր Արարչի առջեւ, նա կ՚ընկնի բժշկի ձեռքը» (Սիրաք ԼԸ 15):

Մեղքն առաջին հերթին բարոյական ավերածություն է. մեր նախահայրը, մեղք գործելով, մահվան դատապարտեց ոչ միայն իրեն, այլեւ հետագա սերունդներին մինչեւ Քրիստոսի առաքելությունը: Ուրեմն՝ եթե մարմնական մեղքերը վերաբերում են առավելապես ախտակիր օրգանիզմին, ապա գործած մեղքերը վտանգի տակ են դնում մարդու բանական, առաքինի գոյությունը: Ախտերը մարմինն են սպանում, իսկ կրքերի ձեւով արտահայտվող մեղքերը հոգին են կորցնում[21]:

Միաժամանակ ամեն մի մեղք կարելի է դիտել իբրեւ հոգեկան ախտ, իսկ ամեն ախտ, այսինքն հիվանդություն՝ որպես մարմնի մեղք, որովհետեւ մեղքերն ի վերջո քայքայում, կազմալուծում են մարմինը, իսկ մարմնական տկարությունները ներգործում են հոգեկան աշխարհի վրա: Բժշկագիտության պատմության մեջ նման պատկերացում գոյություն չի ունեցել: Այդ պատկերացումը ոչ միայն իրական հիմք ունի, այլեւ համընդհանուր եւ հավիտենական ճշմարտություն է: Բժշկությունը բավարարվում է հիվանդության ամեն մի պարագայի առանձնակի, իրավիճակային ախտորոշմամբ, մինչդեռ երկու կարգի ախտորոշումներն էլ անհրաժեշտ են. մեկը հիվանդության վերջնական, իրական, խորքային պատճառն է հայտնաբերում, մյուսը՝ անմիջական ախտը: Արդյունավետ կլիներ, եթե այս երկու ախտորոշումները կիրառվեին միաժամանակ: Միգուցե այնտեղ, որտեղ վերջանում են բժշկության հնարավորությունները, սկսվում է հավատքը, բայց մյուս կողմից էլ ցանկացած հիվանդության դեպքում չօգտվել բժշկությունից եւ հիմնվել միայն հավատքի վրա, նշանակում է անտեսել Աստծո՝ մարդուն տված մեծագույն պարգեւներից մեկը՝ մտածելու կարողությունը: Պարզապես պետք է այդ կարողությունը ծառայեցնել իր ճիշտ նպատակին: Աստծո բոլոր պարգեւները բարի են, բայց դրանք մարդու կողմից կարող են չարի փոխվել սխալ օգտագործմամբ:

Քրիստոնյայի կյանքը որդու կյանք է. նա պետք է ընդունի այն, ինչ տալիս է հայրը: Աստված մարդուն միայն բարիք է ցանկանում, ինչպես հայրն է որդուն բարիք ցանկանում, սակայն միշտ չէ, որ մարդը հասկանում է Աստծո տված իմաստն ու նպատակը: Մեղքից է առաջանում տառապանքը եւ տառապանքի միջոցով է հաղթահարվում մեղքը: Կյանքում մշտապես իրականանում է այն օրենքը, որ մեղքի դիմաց տառապանք է տրվում: Այս տառապանքն իմաստալից է այնքանով, որքանով այն հնարավորություն է տալիս քավելու մեղքը: Մեղքի հաղթահարման այս ուղին ոչ միայն մաքրում է մարդու հոգին, այլեւ իմաստություն է տալիս՝ գիտակցելու եւ բացահայտելու կյանքի բարոյական կողմը, կյանքի իմաստի ողջ խորությունը՝ թեկուզ տառապանքների գնով: Մարդը յուրաքանչյուր տառապանք կկարողանա հաղթահարել, եթե դրանում իմաստ տեսնի: Քրիստոնեական աստվածաբանության մեջ շեշտվում է այն միտքը, որ ամենամեծ տառապանքը նրա աննպատակ լինելու գիտակցության մեջ է, որն առաջանում է հավատքի բացակայությունից: Նույն միտքն է արտա-

21 Հմմտ. **Գրիգոր Նարեկացի**, Մատեան Ողբերգութեան, Բան ԻԸ 14-15:

հայտում Նիցշեն՝ ասելով, որ մարդու համար անտանելի է ոչ թե տառապանքը, այլ տառապանքի անիմաստությունը: Հիվանդը տառապում է ոչ թե սոսկ ֆիզիկական ցավերից, այլ հոգեկան վշտերից[22]: Հոգեկան այդ վշտերը հաճախ անիմաստ են թվում, որով խորանում է տառապանքը եւ հուսալքություն է առաջանում: Հետեւաբար տառապանքի պատճառի եւ իմաստի գիտակցումը տանելի է դարձնում այն: Բայց գիտակցումը դեռ բավարար չէ. ընդունել կյանքը՝ նշանակում է նաեւ ընդունել տառապանքը, եւ մարդու կյանքի գլխավոր նպատակներից մեկն այդ տառապանքների հաղթահարումն է: Մարդկության պատմությունը ցավի պատմություն է: Ցավն ու տանջանքը մարդու կյանքի անբաժան մասն են եւ նրա կյանքի յուրաքանչյուր հանգրվան ունի իր ցավն ու տառապանքը: Բայց իրականությունն այն է, որ դրանք մարդու հոգեւոր կյանքի հիմքն են[23]:

Քրիստոնեական աստվածաբանությունը յուրահատուկ մոտեցում ունի տառապանքի նկատմամբ՝ հիմնվելով Հիսուս Քրիստոսի տառապանքների վրա[24]: Տառապանքի մասին քրիստոնեական ժամանակակից գաղափարախոսությունը համահունչ է Աստծո տառապանքի պատմության հետ. Նա մարդացավ եւ զոհաբերվեց հանուն մարդկության: Ինչպես աստվածաբան Բերնարդ Հարինգն է ասում՝ «Քրիստոս ֆիզիկապես չարչարվեց եւ սարսափելի տառապանքներ ստանձնեց՝ անցնելով մարմնական ցավից անդին»[25]: Քրիստոս անմեղ տառապանք կրեց, բայց ոչ անիպատակ: Նրա տառապանքների ամբողջ իմաստը բացահայտվում է մարդկության մեղքերի քավման մեջ: Հիսուսի տառապանքները բուժիչ ազդեցություն ունեցան տառապանքների աշխարհում[26]: Ցավն ու տառապանքը մեղքի միջոցով աշխարհ մտան, բայց հենց այդ միջոցով Քրիստոս հաղթեց դրանց: Նա մարդկության մեղքերով ծանրացած խաչն իր ուսերին կրեց եւ օրինակ տվեց աշխարհին, օրինակ, որ սովորեցնում է համբերությամբ կրել տառապանքի խաչը, քանզի այս կյանքի տառապանքների հաղթահարումը շնորհի է արժանացնում մարդուն՝ մասնակից դարձնելով Քրիստոսի տառապանքներին: Այս մասին է վկայում Պետրոս առաքյալը. «Սիրելիք՝ մի՛ օտարօտի համարել զեռանդն ինչ որ ի փորձութիւն ձեզ լինիցի, որպէս թէ օտա՛ր ինչ իրք ձեզ դիպիցին. այլ իբրեւ հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն՝ ուրա՛խ լինիջիք, զի եւ ի յայտնութեան փառաց նորա ցնծացեալ բերկրեսցջիք» (Ա Պետրոս Դ 12-13):

Ժամանակակից աշխարհում գնալով ավելանում է բժիշկների, բժշկական սարքավորումների հնարավորությունները, բարձրանում է բուժման մակարդակը, բայց հիվանդությունները ոչ միայն չեն պակասում, այլեւ ավելանում են: Հիվանդությունների աճը եւ բազմազանությունը վկայում է, որ մարդու խաթարված ընթացքն աշխարհի վրա շարունակում է խորանալ, որի հետեւանքով մարդկության մեղքերն ավելի բազմազան եւ բազմաբնույթ են դառնում: Աստված մարդուն առողջ է ստեղծել, իսկ հիվանդություններն ու առհասարակ ցանկացած նեղություն անցյալ, ներկա եւ նույնիսկ ապագա մեղքերի համար են տրվում՝ կամ որպես մեղքի քավության հնարավորություն եւ կամ դեռեւս չգործված մեղքերի կանխում, քանզի Տերը «չի ուզում, որ որեւէ մէկը կորստեան մատնուի, այլ ուզում է, որ ամէնքը ապաշխարեն» (Բ Պետրոս Գ 9):

---

22 Տե՛ս «Բիոէթիկա», էջ 146:

23 Տե՛ս **Joseph A. Amato**, Victims and values, A History and a theory of suffering, New York, 1990, էջ 1:

24 Տե՛ս «Companion Encyclopedia of Thelogy», էջ 832:

25 Անդ, էջ 832:

26 Տե՛ս **Paul S. Fiddes**, The Creative Suffering of God, Oxford, 1992, էջ 110:

Ուրեմն, քրիստոնեական ասպվածաբանությունը մերժում է փառապանքի վերաբերյալ Էֆթանազիայի արդարացմանն ուղղված փաստարկները: Եթե ոմանք մահն ընկալում են որպես միակ միջոց փառապանքներից ազատվելու համար, ապա քրիստոնեությունը նույնիսկ անմեղ փառապանքների մեջ իմաստ է տեսնում: Այդ ամենը բացահայտվում է Քրիստոսի երկրային առաքելությամբ. Նա մարդկության պատմության մեջ միակ անմեղ մարդն էր եւ միեւնույն ժամանակ ամենամեծ փառապողը, սակայն նրա անմեղ փառապանքը փրկեց ամբողջ մարդկությանը: Եւ ինչպես Քրիստոսի անմեղ փառապանքները պտղաբերեց ամբողջ մարդկության համար, այնպես էլ ցանկացած մարդու փառապանքն է պտղաբերում իր եւ իր նմանների համար:

Էֆթանազիան պաշտպանողների մյուս փաստարկմամբ կյանքի իմաստը որոշվում է փառապանքների եւ հաճույքների համեմատաբար առավելության հաշվարկով: Այն դեպքում, երբ փառապանքներն ավելի շատ են, քան հաճույքները, կյանքի որակի հավասարակշռությունը խախտվում է՝ դառնալով անհամաչափ: Ըստ Էֆթանազիայի կողմնակիցների՝ այսպիսի վիճակները պետք է թեթեւացնել մահն արագացնելու միջոցով:

Այս փաստարկն ուժեղ կողմեր ունի, հատկապես երբ առկա է փառապալի կյանքը եւ հիվանդի ցանկությունը՝ չգտնվել այդ վիճակում, այսինքն հիվանդը ոչ երկիմաստ կամք է արտահայտել: Այնուամենայնիվ, այն խոցելի է երկու պատճառով. նախ՝ Էֆթանազիայի հնարավորության վերլուծության ժամանակ կոռեկտ չէ որպես տանջանք կյանքը համեմատել հաճույքի հետ: Տանջանքներն ավելի վատ են հաճույքներից, բացասական հուզումները՝ դրականներից, բայց կարո՞ղ ենք ասել, որ տանջանքն ավելի վատ է անհուսությունից, իսկ բացասական հուզումները՝ ամեն մի հուզմունքի բացակայությունից: Էֆթանազիայի իրավիճակում գիտակցական որոշման ժամանակ առկա են ոչ թե կյանքի տարբեր որակական վիճակները, այլ ընտրությունը կյանքի եւ մահվան միջեւ: Տանջանքները չարիք են հաճույքների համեմատ, երբ ընտրություն է կատարվում տանջանքների եւ հաճույքների միջեւ, բայց տանջանքները բարիք են մեռած անզգայության համեմատ, երբ կատարվում է ընտրություն տանջանքների եւ նույնիսկ տանջվելու անհնարինության միջեւ (անզգայություն):

Քրիստոնեությունը կյանքը դիտում է բարիք իր բոլոր դրսեւորումներով՝ եւ տանջանքներով, եւ հաճույքներով: Կյանքը բարիք է եւ բարիք է մնում նույնիսկ այն ժամանակ, երբ այն գերազանցապես տանջանք է դառնում կամ նույնիսկ՝ անվերջ տանջանք: Էֆթանազիայի կարեւոր դրդապատճառներից է փառապանքներից ազատվելը, բայց արդյոք գոյություն ունի՞ սպասվող հանգստությունը: Քրիստոնեությունն ասում է, որ դա հուսահատություն է, որը հանգեցնում է ավելի մեծ փառապանքների, բայց ա՛յն աշխարհում:

Հեդոնիզմն արդարացնում է Էֆթանազիայի կողմնակիցների՝ փառապանքի եւ հաճույքների վերաբերյալ առաջ քաշած փաստարկները: Եթե հեդոնիստի համար մահը լիակատար անորոշություն է, եւ հնարավոր է նաեւ բացարձակ վերջը, ապա քրիստոնյայի համար կեցության ձեւի փոփոխություն է միայն, կյանքի օրինաչափ ընթացքի մի հանգրվանը հավերժության անցման ճանապարհին: Սրանցով է պայմանավորված երկու տեսակետների կյանքի նպատակի ընկալումը՝ հեդոնիստի համար այս կյանքի հաճույքները, քրիստոնյայի համար հոգու փրկությունը: Երբ խոսքը վերաբերում է փառապանքների ժամանակ կյանքի եւ մահվան ընտրությանը՝ քրիստոնեական տեսանկյունից հարցը մտնում է հոգու փրկության դաշտ:

Ասպված երբեք մարդուն թույլ չի տալիս կրելու առավել տառապանք, քան նա կարող է տանել, եթե ունենա համբերություն եւ ընդունի այն շնորհն ու ուժը, որ Ինքն է տալիս մարդուն նրա պայքարի ընթացքում: Երբ Ասպված թույլ է տալիս, որ տառապանքը մուտք գործի մարդու կյանք, Նա դրանում մեծ բարիք է դնում, որին մարդն արժանանում է այն հաղթահարելու միջոցով: Եթե ամփոփենք տառապանքի իմաստի քրիստոնեական ողջ էությունը, ապա այն կարելի է մեկ մտքով արտահայտել. տառապանքը բացահայտում է կյանքի խոր իմաստը եւ մարդուն հասկացնում է, որ նա տիեզերքի տերը չէ, մարդ, որ այսօրվա տեխնիկայով հագեցված ժամանակաշրջանում իրեն Ասպված է զգում եւ նրան թվում է, թե ինքը կարող է գերազանցել Աստծո արարչագործությունը:

Հաջորդ փաստարկը, որն առաջին հայացքից շատ հիմնավոր եւ համոզիչ է թվում, էֆթանազիայի արդարացումն է գթասրտության եւ արդարության միջոցով. էֆթանազիան համարվում է գթասրտություն նրա նկատմամբ, ում օգնում են մահանալ եւ արդարացի՝ շրջապատի եւ հասարակության նկատմամբ:

Էֆթանազիայի կողմնակիցների բարեգութ սպանության տեսությունը մերժվում է քրիստոնեական մտածողության դիրքերից: Էֆթանազիայի արդարացման գթասրտության փաստարկը հաճախ կարող է կեղծվել թե՛ հիվանդի հարազատների, թե՛ բժիշկների կողմից. միգուցե հարազատների համա՞ր է անտանելի՝ տեսնել հիվանդին այդ վիճակում եւ հիվանդի հանգիստ մահվան միջոցով փորձում են հենց իրենց ազատել այդ տառապանքներից: Էֆթանազիան նման պարագաներում հեշտ եւ էժան ընտրություն է: Իսկ այն դեպքում, երբ էֆթանազիան կատարվում է իրական գթասրտության քողի տակ, պետք է մի բանում համոզված լինել. բժիշկը եւ առհասարակ որեւէ էակ ավելի գթասիրտ չէ, քան Նա, ով մարդկային էակին է արարել: Ասպված մարդուն կյանք է շնորհել, եւ Նա էլ կանխորոշված ժամկետում այն նրանից վերցնում է: Սիրաքի իմաստության մեջ ասվում է. «Տիրոջ բոլոր գործերը շատ բարի են, եւ Նրա բոլոր հրամանները կատարում են իրենց ժամանակին. վայել չէ ասել՝ ի՞նչ է սա, կամ ինչո՞ւ է սա, քանզի ամէն ինչ պիտի կատարուի իր ժանանակին» (Սիրաք ԼԹ 21): Բժշկի «գթասիրտ» քայլը չի դադարում սպանություն լինելուց նույնիսկ այն պարագային, երբ այդ քայլին նրան դրդել է գթասրտության զգացումը, անհուսալի ու ծանր հիվանդին հեւգազա տառապանքներից ազատելու մարդկային ցանկությունն ու խիղճը: Էֆթանազիայի հակառակորդների այս հիմնավորման դեմ առաջ է քաշվել այն հակափաստարկը, թե սարքը պահպանում է միայն կյանքի երեւութականությունը, որը դրսեւորվում է շնչառության եւ արյան շրջանառության ձեւով այն դեպքում, երբ իրականում մարդը մեռած է, որեւիցե ցավ չի զգում, նրա կենսագործունեության աղբյուրը՝ ուղեղը, արդեն մեռած է: ԺԸ դարի փիլիսոփա Դեյվիդ Հյումը պնդում էր, որ եթե արհեստականորեն մարդու կյանքին վերջ դնելը օրինազանցություն է Աստծո առջեւ՝ իբրեւ կյանք պարգեւողի եւ տնօրինողի, նույնը կարող է ասվել արհեստականորեն որեւէ մեկի կյանքը բժշկական սարքավորումներով երկարաձգելու պարագայի[27]:

Քրիստոնեությունը մարդու կյանքը բացառիկ արժեք է ընդունում, արժեք, որն անփոխարինելի եւ եզակի է: Հետեւաբար մարդն ամեն ինչ պետք է անի այդ արժեքը պահպանելու

27 Տե՛ս «Վազգենյան դպրանոց», հոգեւոր-մշակութային պարբերական, 2008, թ. 2, էջ 29 (**Գեւորգ արդ. Սարոյան**, Էվթանազիա եւ բժշկական էթիկա):

համար: Բժշկությունից պետք է օգտվել միայն այն դեպքում, երբ այն նպատակ ունի երկարաձգելու Աստծո պարգևը՝ կյանքը: Չպետք է առաջնորդվել մարդկային չափորոշիչներով՝ կյանքի արժեքը սահմանելու համար: Այդ արժեքն արդեն իսկ Աստծո կողմից բացարձակ է տրվել մարդուն, բացարձակ այն կոչումով, որ նա այլևս պահապանն ու պատասխանատուն է այդ անսահման արժեքի: Իսկ իրականում գթասրտությունը ոչ թե մահվան օգնության մեջ է, այլ նրա հետ ցավը կիսելու, նրան կարեկից լինելու մեջ, որը հիմնավորվում է Հիսուսի խոսքերում. «... հիւանդ էի՝ եւ տեսէք զիս...» (Մատթ. ԻԵ 36):

Գիտությունը սրընթաց կերպով զարգանում է, կատարելագործված կենսաբժշկական սարքավորումը հրաշքներ է գործում՝ պահպանելով մարդու կյանքը նույնիսկ տասնյակ տարիներ, բայց ավելին անել անկարող է: Նա բացահայտեց մարդու մարմնի գրեթե բոլոր գաղտնիքները, բայց դրանից այն կողմ մի իրականություն է, որտեղ այլևս անելիք չունի: Հոգևոր այդ իրականությունը հավիտենական է ու անսահման, եւ մարդը, ըստ Սուրբ Գրքի, մասնակից է լինելու այդ հավիտենականությանը հոգին փրկելու կամ կործանելու վիճակներով: Քանի դեռ մարդ երկրային կյանքի մեջ է, հնարավորություն ունի շատ բան ճանաչելու եւ որ գլխավորն է՝ իր ընթացքից դարձի գալու: Տառապող հիվանդը շատ մոտ է ճանաչողության այդ սահմանին եւ ո՞վ գիտե, միգուցե արդեն իսկ սկսում է ճանաչել, իսկ մարդուն կյանքից զրկելն էֆթանազիայի միջոցով ոչ միայն բռնությամբ հոգու վտարում է, այլեւ միգուցե զրկում ճանաչելու եւ ապաշխարելու հնարավորությունից: Եթե Աստծո կամքն է, որ հիվանդը մահանա, ապա կատարելագործված տեխնիկան ոչինչ չի կարող անել, իսկ քանի դեռ հիվանդը կա, ապրում է, ուրեմն դա Աստծո կամքն է եւ պետք է ընդառաջ գնալ Նրա կամքին: Աստծո կամքին ընդառաջ գնալն այս պարագայում Նրա իսկ կողմից մարդուն պարգևած շնորհի ճիշտ օգտագործումն է՝ պահելու, պահպանելու եւ արդյունավորելու այն կյանքը, որը սուրբ է:

Այսպիսով, քրիստոնեական տեսանկյունից էֆթանազիան ապտվածադիր օրենքների խախտում է, մարդուն տրված ազատության չարաշահում, հոգու անմահության ու հավիտենական կյանքի ժխտում եւ վերջապես՝ անհավատություն: Մարդկության այդ անհավատությունն ու մեղքերը թերեւս բավարար կլինեին Հիսուսին կրկին խաչ բարձրացնելու: Իսկ Նա պիտի կրկներ՝ «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետեւ չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. ԻԳ 34):

Էֆթանազիայի մասին վեճերը շարունակվում են, օրեցօր ավելանում են նրա օրինականացման փորձերն ու հաջողությունները, իսկ թե ինչ կլինի մոտ ապագայում՝ հայտնի չէ. միայն մի բան պետք է հիշել՝ մարդու հետագա գոյությունը կախված է նրա հոգևոր վիճակից: